## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

### <u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

### ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԷՍ-2019/18, 08.02.2019թ.

**Բողոք բերող անձ՝** «ԹԵՈՖԱՐՄԱ» ՍՊԸ

**Պատվիրատու** «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ

**Ընթացակարգի ծածկագիրը՝** «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ

**Գնման առարկա** Բժշկական պարագաների ձեռքբերում

**Բողոքի պահանջը՝**

**1.** Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրի հրավերով արգելել կատարել որոշակի գործողություններ եւ ընդունել որոշումներ, պարտավորեցնել պատվիրատուին չկայացած համարել «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը:

2. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքը բավարարվելու դեպքում վերադարձնել բողոքի քննության համար նախատեսված վճարը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Հասցե՝ Մելիք Ադամյան 1, Երևան քաղ.

Բողոք բերող անձ՝ «Թեոֆարմա» ՍՊԸ

Տնօրեն Վ. Մակինյան

Հասցե՝ Դաֆիք Բեկի 1 թաղ., 5 տուն, Երևան քաղ.

Հեռ. 91- 413917, 98- 41 39 17

Էլ. փոստ՝ mercadoholding@gmail.com

Պատվիրատու՝ « Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Հասցե՝ Բանակի 8, Վանաձոր քաղ.

Էլեկտրոնային աճուրդի ծածկագիր՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/17

բժշկական պարագաների ձեռքբերում

# Բ Ո Ղ Ո Ք

## 1. Վեճի առարկան.

1.1 «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՎԲԿ ԷԱՃԱՊՁԲ-19/17 ծածկագրով գնման ընթացակարգ: Հետադարձ աճուրդը կայանալու է 08 փետրվարի 2019 թվականի ժամը 11:00-ին:

1.2 ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ 19/17 ծածկագրով հրավերը (հետայսու՝ հրավեր) չի համապատասխանում «Գնումների մասին» 22 օրենքի 13-րդ հոդվածի խմբերաուիվ պահանջներին, իսկ հրավերի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կազմված են այնպես, որ իրենց մեջ պարունակում են խտրական պահանջ, ուղղորդող են հստակ մեկ արտադրողի և 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով ներկայացված է «ֆտալտ» անվանումով նյութ որը գոյություն չունի:

## 2. Բողոքի փաստական և իրավական հիմքերը.

2.1. «Գնումների մասին» 22 օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:»

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ
N 4859-19
«08» 02 2019թ.

2.2. Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր չափաբաժինները չեն համապատասխանում օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:

Օրենսդիրը իմպերատիվ կանոն է սահմանել, որ *«Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի **«կամ համարժեք»** բառերը»:*

Ուսումնասիրելով հրավերի տեխնիկական բնութագրերը արձանագրում ենք, որ հրավերը կազմվել է հիշատակված նորմի խախտմամբ, տեխնիկական բնութագրերը պարունակում են հղումներ եւ այդ պարագայում առկա չէ «կամ համարժեք» եզրույթը:

Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը խտրական պահանջ են ներառում իրենց մեջ, որը սահմանափակում է հնարավոր հայտատուների մասնակցությունը, օրինակ՝ 3-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով ներկայացված է խտանյութ AF -15 /1*4/, որը չի կարող համատեղվել մյուս չափորոշիչների հետ, եւ միեւնույն ժամանակ օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունի խտանյութ AF - 11-ից AF -14 անվանումով:

5-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի որպես մանրէազերծման միջոց է նշվել բետամանրէազերծումը, մինչդեռ այլ ճառագայթներով մանրէազերծումը նույնպես ապահովում է միջոցի ստերիլիզացիան եւ ապահովում է պահանջվող անհրաժեշտ արդյունքը:

5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրով ներկայացվել է պահանջ, որ բժշկական պարագան չպետք է պարունակի «ֆտալատ», մինչդեռ նման քիմիական նյութ գոյություն չունի:

Սա նույնպես վկայում է այն մասին, որ պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին եւ հայտատուի համար ստեղծել է ապակողմնորոշող իրավիճակ:

Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

Պատվիրատուն օրենքին անհամապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակել է հնարավոր հայտատու մասնակիցների մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:

Իրավական նորմերի խախտմամբ կազմված և ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրանց իրականացման համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

3. Պահանջ

3.1. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17 ծածկագրի հրավերով արգելել կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ. պարտավորեցնել պատվիրատուին չեղյալ համարելու ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը:

3.2 Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքը բավարարվելու դեպքում վերադարձնել բողոքի քննության համար նախատեսված վճարը:

Կից ներկայացվում են.

1. Անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
2. բողոք ներկայացնելու համար վճարման անդորրագրի պատճեն:

«Թեոֆարմա» ՍՊԸ

Տնօրեն Վ. Մակինյան

08 փետրվարի, 2019թ